



ՄԱԿ-ի ԼՐԱՏՈՒ

ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակ

1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ:

Նախաբան	2
ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակ	2
ՄԱԿ-ի Չարգացման ծրագիր (UNDP)	3
ՄԱԿ-ի Փախստականների գծով գերագույն հանձնակատար (UNHCR)	5
ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ (UNICEF)	7
ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ (UNFPA)	10
Համաշխարհային պարենի ծրագիր (WFP)	11
Համաշխարհային բանկ (WB)	12
Առողջապահության համաշխարհային կազմակերպություն (WHO)	13
Մարդասիրական հարցերի համակարգման գրասենյակ (OCHA)	13
Միգրացիայի միջազգային կազմակերպություն (IOM)	14
ՄԱԿ-ի Հասարակական տեղեկատվության բաժին (DPI)	15

Խմբագրի անկյուն

Միքելի ընթերցող,

Սա ՄԱԿ-ի եռամսյա տեղեկագրի նոր տարբերակն է, որը ծնվել է ՄԱԿ-ի հայաստանյան ընտանիքում: ՄԱԿ-ի 1946թ. առաջին բանաձևերից մեկը շեշտում է. «Քանի դեռ աշխարհի մարդիկ անիրազեկ են ՄԱԿ-ի նպատակներին և գործունեությանը, Միավորված ազգերի կազմակերպությունը չի կարող հասնել իր առջև դրված նպատակներին»: Կյանքի և ժամանակի հրամայականն՝ աշխարհում ամենասանհրաժեշտ ուժի՝ ՄԱԿ-ի նպատակների, սկզբունքների, ծրագրերի և փաստաթղթերի պատմությունը ներկայացնելն է:

Ինչպե՞ս է գործում և փոփոխվում այս կազմակերպությունը: Ինչո՞ւլ են գրադված ՄԱԿ-ի գործակալությունները Հայաստանում, և ինչպե՞ս են նրանք միասին ապրում միևնույն հարկի տակ: Ի՞նչ են նշանակում UNDP, UNHCR, UNICEF, WFP և այլ հասպատվանքները: Ի՞նչ են բովանդակում ՄԱԿ-ի հիմնական փաստաթղթերը: Մենք հավակնում ենք այս տեղեկագրով բավարարել կրթական հաստատությունների, հասարակական կազմակերպությունների, մամուլի, ինչպես նաև Հայաստանի գյուղական բնակչության պահանջները՝ ավելին իմանալու մեր գործունեության ու նպատակների մասին: ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղար Քոֆի Անանի ընդգծել է. «Պատմությունը շարադրելը նույնքան կարևոր է, որքան պատմությունը կերտելը»: Մենք փորձում ենք անել ամենայն հնարավորը: Ուրախ կլինենք, եթե ՄԱԿ-ի տեղեկագիրն օգտակար և պիտանի լինի ձեր գործունեության համար. ինչպես նաև մեր հետագա համագործակցության արդյունավետ անսպարեզ դառնա: Լավագույն մադրանքներով,

Վալերի Տկաչուկ

 Հայաստանում ՄԱԿ-ի
 Հասարակական տեղեկատվության բաժնի ներկայացուցիչ

ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղար Քոֆի Անանի ելույթը ժնեյան կոնվենցիաների 50-ամյակին նվիրված արարողության ժամանակ

Ուրախ եմ, որ այսօր ձեզ հետ եմ: Եթե Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությունը կարող է դիտվել մեր ձեռք բերած փորձի, իսկ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը՝ մեր գաղափարների մարմնավորում, ապա Ժնևյան կոնվենցիաները կես դար շարունակ արտահայտել են մարդկության վճռակառությունն անգամ պատերազմների ժամանակ, նվազագույն հարգանք ապահովել մարդասիրական սկզբունքների նկատմամբ:

Այնտեղ, ուր առկա է հակամարտության վտանգը, ամհրաժեշտ է կանխելու ուղիներ փնտրել: Այնտեղ, ուր հակամարտությունն արդեն իսկ առկա է, պետք է դադարեցնել: Իսկ այնտեղ, ուր մեր օգնությամբ հակամարտությունը դադարեցվում է, պետք է քայլեր ձեռնարկել, որպեսզի չկրկնվի այն: Միավորված ազգերի այս նվիրական առաքելություններն ավելացան ևս մեկով, այն է՝ հարգանքը միջազգային մարդասիրական օրենքի նկատմամբ:

Նախկին Հարավսլավիայի և Ռուսանդայի համար Միջազգային քրեական տրիբունալները նոր շունչ ու կարևորություն հաղորդեցին Ժնևյան կոնվենցիաներին՝ առաջադրելով պատերազմական

հանցագործությունների համար հաշվետու լինելու և անհատական քրեական պատասխանատվության ենթարկելու գաղափարները:

Սակայն կոնվենցիաներն արել են ավելին: Գրանք մեզ շարունակ հիշեցնում են այն մասին, որ ցանկացած հակամարտության ժամանակ, երբ թիրախ են դառնում քաղաքացիները, լինի Բոսնիայում, Ռուսանդայում, Կամպուչիայում, Կոսովոյում կամ Սիերա Լեոնեում, կան բռնաջողներ և զոհեր: Միջազգային քրեական դատարանի հիմնումը վկայում է համաշխարհային արդարություն ապահովելու ձգտման մասին, և ես հուսով եմ, որ նրա կանոնադրությունը կարճ ժամանակում կվավերացվի ողջ աշխարհում:

21-րդ դարի շեմին խաղաղության և անվտանգության հաստատմանն ուղղված մեր ջանքերի հիմքում ընկած կլինի միջազգային մարդասիրական օրենքի նկատմամբ հարգանքն ապահովելու և անպատժելիությանը վերջ դնելու մղումը: Մենք այսուհետ էլ կշարունակենք առաջնորդվել, ոգեշնչվել ու խիզախել Ժնևյան կոնվենցիաների սկզբունքներով:





Ինձ համար չափազանց ուրախալի է **Հայաստանում ՄԱԿ-ի տեղեկագրի** առաջին համարի լույսընծայումը: Ողջունում եմ ՄԱԿ-ի Հասարակական տեղեկատվության

բաժնին այս կարևոր պարբերականի հիմնադրումը նախաձեռնելու համար:

Կարևոր այնքանով, որ 1992թ. ի վեր, երբ այստեղ բացվեց ՄԱԿ-ի գրասենյակը, սա Հայաստանում լույս տեսնող ՄԱԿ-ի առաջին համապարփակ տեղեկագիրն է: Շատ ժամանակ չի անցել այդ օրվանից, սակայն երկիրը հաղթահարել է ճգնաժամը, և այսօր, երբ Հայաստանի միջազգային գործընկերները զարգացման գործում իրենց համագործակցությունն են կենտրոնացնում, ՄԱԿ-ի տեղեկագիրը կարող է երկրի իրավիճակի, նրա կարիքների ու զարգացման հնարավորությունների բնարկման կարևոր ամբիոն դառնալ: Պարբերականը կտեղեկացնի, թե ինչպես են ՄԱԿ-ի գործակալությունները, Հայաստանի երկկողմ գործընկերների հետ համակարգված, աշխատում կառավարության և քաղաքացիական հասարակության հետ՝ նոր բարգավաճող ժողովրդավարություն հաստատելու համար:

Ու՞մ համար է նախատեսված այս տեղեկագիրը: Առաջին հերթին երկրի բնակչության՝ հասարակ քաղաքացիների և նրանց առավել գործունյա ներկայացուցիչների համար, որոնք ներգրավված են տարբեր հասարակական կազմակերպություններում: Նրանք կարող են հասու լինել Հայաստանում ՄԱԿ-ի կատարած աշխատանքի կարևորությանն ու բազմակողմանիությանը: Երկրորդ, տեղեկագիրը հասցեագրված է կառավարության և պետական տարբեր հաստատությունների ծառայողներին: Նրանց աշխատանքների համար այս տեղեկագիրը կարևոր

աղբյուր կդառնա ՄԱԿ-ի գործունեության մասին: Երրորդ, տեղեկագիրը նախատեսված է նվիրատու հասարակության համար՝ երկկողմ կամ բազմակողմ, տեղական կամ օտարերկրյա, և ֆոնդերի օգտագործման վերաբերյալ տեղեկատվության փոխանակման ու միևնույն նպատակների իրականացմանն ուղղված նրանց ջանքերի համակարգման միջոց կդառնա:

Ընթերցողները՝ քաղաքացիական հասարակության, կառավարության ներկայացուցիչները և նվիրատուները, տեղեկագիրը կարող են օգտագործել մաս իրենց կարծիքներն ու տարբեր մոտեցումներն արտահայտելու, առաջարկներ անելու, ինչպես մաս ընդհանուր շահերի և առաջին հերթին երկրի իրավիճակին վերաբերող թեմաներով քննարկումներ անցկացնելու նպատակով:

Որպես Հայաստանում ՄԱԿ-ի Մշտական համակարգող՝ համոզված եմ, որ ՄԱԿ-ի այս նոր տեղեկագիրն օգտակար կլինի բոլոր ընթերցողների համար, այդ թվում՝ ՄԱԿ-ի գրասենյակում միավորված գործակալությունների աշխատակազմի անդամների և աշխատակիցների համար, հետևելու, թե ինչ ուղղությամբ է ընթանում կազմակերպությունը, որոնք են նրա զարգացման միտումները, ինչպես պետք է դիմակայել գլոբալիզացիայի դարաշրջանում համընդհանուր սպառնալիքներին, ինչպես օրինակ ընչազրկությանն ու լքվածությանը:


Ի վերջո, հուսով եմ, որ տեղեկագիրը հարուստ և բովանդակալից կլինի, ինչպես մաս մատչելի ու ընթերցելի բոլորի համար:

Ակնկալում եմ ձեր ներկայությունը ՄԱԿ-ի տեղեկագրի էջերում:

Կատիցա Չեկալովիչ

ՄԱԿ-ի Մշտական համակարգող
UNDP Մշտական ներկայացուցիչ

ՄԱԿ-ը ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ



- ՄԱԿ-ի Մշտական համակարգող (Գլխավոր քարտուղարի զարգացման գործունեության գծով ներկայացուցիչ և երկրում ՄԱԿ-ի թիմի առաջնորդ)
- ՄԱԿ-ի Քարտուղարության բաժիններ
- ՄԱԿ-ի ծրագրեր և այլ մարմիններ (որոնք ՄԱԿ-ի հետ կապված են հատուկ պայմանագրերով. Գլխավոր քարտուղարի զեկույցով ու ECOSOC-ով)
- Մասնագիտացված գործակալություններ և այլ կազմակերպություններ

• 1992թ. սեպտեմբերի 17-ին Նյու Յորքում ՄԱԿ-ի և Հայաստանի Հանրապետության միջև կնքվեց պայմանագիր, որի արդյունքում Հայաստանը դարձավ ՄԱԿ-ի անդամ: Հայաստանի Հանրապետության կողմից պայմանագիրն ստորագրեց Հայաստանի ՄԱԿ-ի առաջին դեսպան պրն. Ա. Արզումանյանը

• ՄԱԿ-ի գրասենյակը Հայաստանում բացվեց 1992թ. դեկտեմբերին և սկզբում տեղակայված էր «Հրազդան» հյուրանոցում

• 1995թ. հոկտեմբերին ՄԱԿ-ի գրասենյակը տեղափոխվեց նոր շենք Երևանի կենտրոնում:

UN	Մշտական համակարգող	Տիկ. Կատիցա Չեկալովիչ
UNDP	Մշտական ներկայացուցիչ	Տիկ. Կատիցա Չեկալովիչ
UNDPPI	Ներկայացուցիչ	Պրն. Վալերի Տկաչուկ
OCHA	Ներկայացուցիչ	Տիկ. Կատիցա Չեկալովիչ
UNICEF	Ներկայացուցչի օգնական	Տկն. Գլորիա Ֆերնանդես
UNHCR	Ներկայացուցիչ	Պրն. Թոմաս Բիրաթ
WFP	Ներկայացուցիչ	Տիկ. Կատիցա Չեկալովիչ
UNFPA	Ներկայացուցիչ	Տիկ. Կատիցա Չեկալովիչ
WHO	Ծրագրի գրասենյակի ղեկավար	Պրն. Հրայր Ասլանյան
WB	Մշտական ներկայացուցիչ	Պրն. Օուեյջ Սաադաթ
IMF	Մշտական ներկայացուցիչ	Պրն. Ջորջ Անայտոս
IOM	Գրասենյակի պաշտոնակատար	Պրն. Նիլին Բարուա

ՄԱԿ-ի ՉԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ



UNDP-ն Միավորված ազգերի կազմակերպության համակարգում զարգացման բազմաբնույթ կառույց է:

Այն նպաստում է քաղաքացիական հասարակության մասնակցությանը և կառավարման համակարգերի ամրապնդմանը:

36 տեղական գրասենյակների միջոցով տեխնիկական համագործակցության նախագծեր և ծրագրեր է իրագործում 175 երկրներում:

Իր SHD իրավագրի շրջանակներում տեխնիկական օժանդակություն է տրամադրում ազգային տարածաշրջանային և համաշխարհային ծրագրերին:

Աջակցում է ՄԱԿ-ի զարգացման համաշխարհային օրակարգին և մշտական համակարգողի համակարգի միջոցով խթանում զարգացմանն ուղղված ՄԱԿ-ի հետևողական գործունեությունը: Օժանդակ ծառայություններ է տրամադրում կառավարությանը և միջազգային գործակալություններին:

Հայաստանում **UNDP-ի** գրասենյակը բացվել է 1992թ. դեկտեմբերին: ՄԱԿ-ի այլ գործակալությունների ու միջազգային դոնոր հասարակության հետ համակարգված աշխատանքների և Հայաստանի կառավարության հետ համագործակցության արդյունքում, ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակը մշակեց Հայաստանին

տեխնիկական օժանդակություն տրամադրելու **«Երկրի համագործակցության շրջանակները (CCF)»** անունով մանրամասն ծրագիր 1997-1999թթ. համար: Թեև այս ծրագրում ընդգրկված նախագծերն արդեն տալիս են առաջին շոշափելի արդյունքները, դրանց իրական արժեքն ակնհայտ կդառնա հաջորդ տասնամյակում:

Հայաստանում

Բացի հիմնական գործունեությունը, UNDP-ն գործնական օժանդակություն է ցույց տալիս ՄԱԿ-ի ոչ-մշտական UNESCO, UNIDO, FAO, ITC, UNCTAD, ICAO, UNDP, IAEA գործակալությունների իրականացրած ծրագրերին այն բնագավառներում, որտեղ մասնագիտացած են այս գործակալությունները՝ սկսած արդյունաբերական ու գյուղատնտեսական զարգացումից մինչև կրթությունն ու թմրադեղերի վերահսկողությունը, քաղաքացիական ավիացիան ու ստոմային էներգիան:

CCF-ի երեք թեմատիկ ուղղությունները

- Կառավարան և զարգացման ղեկավարում՝ ազգային, տարածաշրջանային և տեղական մակարդակներով,
- Կայուն կենսապայմաններ առանձին ոլորտներում, այդ թվում՝ սոցիալական ոլորտների ամրապնդում,
- Շրջակա միջավայրին առնչվող խնդիրները կայուն զարգացման և աղքատության վերացման կոնտեքստում:

Ժողովրդավարության հաստատությունների, գործընթացների եւ գործունեության ամրապնդումը
«Ժողովրդավարության ամրապնդում և լավ կառավարում»

Ծրագրի նպատակը ժողովրդավարական սկզբունքների ամրապնդման համար բազմակողմանի օժանդակության տրամադրումն է և երկրում կառավարման բազայի զարգացումը: Առաջին փուլում աջակցությունն ուղղվում է ընտրական գործընթացներին:



Տեղեկատվական ենթակառուցների կայուն զարգացում - Ինտերնետ
Ինտերնետը լրատվական տեխնոլոգիաները Հայաստանում սկսեց կիրառել հետևյալ եղանակներով.


- տարածաշրջանում առաջինը ստեղծեց FREENET ցանցը (տարածություն տեղեկատվության ազատ փոխանակման համար) և WWW ինֆորմացիոն աղբյուրը, որոնց միջոցով այսօր կապվում են հազարավոր մարդիկ Հայաստանում և ողջ աշխարհում,
- կառավարության և հասարակական կազմակերպությունների ավելի քան հազար ներկայացուցիչների համար տեխնոլոգիաների մասին ուսուցման դասընթացներ կազմակերպեց,
- ստեղծեց Yerevan Internet Exchange-ը՝ երկրի ներսում էլեկտրոնային տվյալների ցանցային օպտիմալ համակարգը,
- ինտերնետում պաշտոնական էջեր բացեց Հայաստանի կառավարության և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համար,
- ողջ աշխարհում ընդունված համակարգչային ցանցերում ներմուծեց հայերենը:

ՉԱՐԳԱՑՄԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒՄ

Ազգային զարգացման օրակարգը
UNDP-ի Հայաստանի զարգացման մանրամասն նախագիծն իր շուրջը հավաքեց ազգային փորձագետների մի խումբ՝ Համաշխարհային բանկի տեխնիկական օժանդակությամբ ազգային զարգացման միջին ժամկետային

Արտահանման խթանման եւ զարգացման ծրագիրը
Առևտրի միջազգային կենտրոնի հետ համատեղ ձգտում է նոր մոտեցումներ գտնել առանձին ձեռնարկությունների արտահանումների ծավալը մեծացնելու համար: UNDP-ի ծրագրավորման դինամիկան 1994-1998թթ. (ԱՄՆ մլն. դոլար):

ռազմավարության մշակման համար:



ԿԱՅՈՒՆ ԿԵՆՍԱԴՊԱՑՄԱՆՆԵՐ

Համատեղ աջակցություն մարդկային կայուն զարգացմանը

Ծրագիրն առաջին 1,5 տարվա ընթացքում կարևոր արդյունքների հասավ գործունեության հետևյալ վեց ուղղությունների բնագավառներում. *ա/ կառավարման բազայի ձևավորում, բ/ սոցիալական ծառայությունների վերակառուցում, գ/ փոքր ձեռնարկությունների զարգացում, դ/ գյուղատնտեսության զարգացում, ե/ անտառատնկման շտապ վերականգնում, զ/ մարդկային անվտանգության ապահովման կատարելագործում:*

- 10 դպրոցների և 20 առողջապահական հիմնարկների ամբողջական վերականգնում 4 մարզերում,
- 3 բուժկենտրոնի հիմնադրում,
- դասընթացներ և կադրային բազայի ամրապնդում տեղական ինքնակառավարման մարմինների անձնակազմի համար 17 գլխավոր քաղաքներում և մոտավորապես 200 համայնքներում կառավարման ու ղեկավարման, հարկային ու համայնքային բյուջեի ձևավորման բնագավառներում,
- փոխառությունների տրամադրում բնակչության առավել կարիքավոր խավին (մասնավորապես փախստականներին ու տեղահանվածներին):

Առողջապահության ենթակառուցվածքի վերականգնումն ու զարգացումը
 UNDP-ն գործնական և վարչական օգնություն է տրամադրում ՄԱԿ-ի «ՁԻԱՀ-ի դեմ» ծրագրին, Բնակչության Հիմնադրամին, Առողջապահության համաշխարհային կազմակերպությանը՝ իրենց ծրագրերի իրականացման համար:
 ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի Հայաստանում Վերականգնողական առողջապահության ծառայությունների ամրապնդման ծրագիրն աջակցել է առողջապահության ոլորտի մասնագետների համար վերապատրաստման դասընթացների անցկացմանը և ՀՀ Առողջապահության նախարարության առողջապահական-վերականգնողական առողջապահության առնչվող հնարավորությունների հզորացմանը:
 UNDP-ն Հայաստանի համար իրագործում է ՄԱԿ-ի «ՁԻԱՀ-ի դեմ» ծրագրի հավանությունն ստացած նախաձեռնությունները՝ օժանդակելով ՀՀ Առողջապահության նախարարությանն առընթեր ՁԻԱՀ-ի կանխարգելման ազգային կենտրոնին:

Շրջակա միջավայրի պահպանություն
 UNDP-ի օժանդակությունը շրջակա միջավայրի պահպանության ոլորտին եղել է.

- երկրի եղանակային փոփոխությունների և ջերմոցային վառելիքի հայտնագործման առաջին ուսումնասիրության կազմակերպումը,
- ազգային կենսաբազմազանությանը վերաբերող գեկույցի, ռազմավարության և գործողության պլանի զարգացումը,
- ՀՀ Բնության և շրջակա միջավայրի պահպանության նախարարության կառուցվածքային վերափոխումը,
- Սևանա լճի հիմնախնդիրների վերաբերող միջազգային համաժողովի կազմակերպումը,
- անտառատնկման շտապ վերականգնումը:

Աջակցություն կրթական բարեփոխումներին
 UNDP-ն UNICEF-ի, UNHCR-ի և այլ կազմակերպությունների հետ միասին աջակցեց Հայաստանի կրթական համակարգի բարեփոխմանը, որ երկիրն իրականացնում է Համաշխարհային բանկից ստացվող ֆինանսատեխնիկական օգնությամբ: ՄԱԶԾ-ն օժանդակել է դասագրքերի վարձավճարային համակարգին, ուսուցիչների վերապատրաստմանը, դպրոցների տնօրենների իրավական և վարչական խնդիրներին առնչվող փորձնական վերապատրաստմանը և որոշ դպրոցների փոքր կրթաթոշակների հատկացմանը:

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՉԱՐԳԱՅՄԱՆ ԻՆՏԳՐԱԿՆԱԿԱՆ ԶԱՅՎԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանում UNDP-ի գրասենյակը հրատարակել է Մարդկային զարգացման ազգային չորս գեկույցներ, որոնք նախատեսված են երկրի քաղաքական և տնտեսական անցումային շրջանի հիմնախնդիրների շուրջ քննարկումները խթանելու նպատակով:

- 1995 - *Անցումային շրջանի մարդկային գիներ*
- 1996 - *Աղքատություն*
- 1997 – *Մոցիպական համագործակցություն*
- 1998 – *Պետության դերը:*



1999թ. *Մարդկային զարգացման ազգային գեկույցը՝ «Անցումային շրջանի 5 տարիները», կտպագրվի 1999թ. սեպտեմբերին:*

UNHCR-ը ԶԱՅՎԱՍՏԱՆՈՒՄ ՆՎԱՃՈՒՄՆԵՐ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐ



Ի՞նչ է UNHCR-ը

ՄԱԿ-ի Փախստականների գծով գերագույն հանձնակատարի գրասենյակը ստեղծվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1951թ.՝ հետագայում դառնալով աշխարհի ամենաազդեցիկ մարդասիրական գործակալություններից մեկը: UNHCR-ը ՄԱԿ-ի կողմից իրավագրված է գլխավորելու և համակարգելու ողջ աշխարհում փախստականների պաշտպանության և նրանց խնդիրների լուծման միջազգային գործողությունները: UNHCR-ը իրավասու է վերահսկելու Փախստականների կարգավիճակի մասին 1951թ. Ժնևյան կոնվենցիայի իրականացումը:

ՄԱԿ-ի քառու #1, 1999



ՄԱԿ-ի Փախստականների գծով գերագույն հանձնակատարի գրասենյակը Հայաստանում սկսել է գործել 1992թ., երբ հրավիրվեց ՀՀ կառավարության կողմից՝ Ղարաբաղյան հակամարտության հետևանքով 1988-1992թթ. Հայաստան ժամանած փախստականների խնդիրների լուծմանն օժանդակելու համար: Ներկայումս Հայաստանում գրանցված մոտ 300 հազար փախստականներ կան, որոնց մեծ մասը ազգությամբ հայ են:



UNHCR-ի խնդիրը ողջ աշխարհում փախստականների խնդիրների հիմնավոր լուծում գտնելն է: Հայաստանում ազգությամբ հայ փախստականների համար հիմնավոր լուծումը նրանց ինտեգրացիան է՝ հանգելով միաձուլման: Փախստականները, որոնցից շատերը ժամանել են ավելի քան տասն տարի առաջ, այժմ բավականին ինտեգրացվել են Հայաստանի հասարակության մեջ: Հետևաբար, UNHCR-ը նրանց միաձուլումը դիտում է որպես լիակատար ինտեգրացման բնական քայլ: Ազգությամբ հայ փախստականների երկրի քաղաքացիներ դառնալը խրախուսելու նպատակով UNHCR-ը կառավարության հետ սերտ համագործակցությամբ և հասարակական կազմակերպությունների օժանդակությամբ իրականացրել է ինտենսիվ միաձուլման քարոզարշավ, որը հանգեցրել է միաձուլված փախստականների շարքերի սովորացմանը:

UNHCR-ը օգնություն է տրամադրում ծերերին նրանց հիմնական կարիքները հոգալու համար:


1992թ. UNHCR-ը Հայաստանում իր գործունեությունն սկսեց մարդասիրական ծրագրերով (ինչպես կերոսինի, սննդի, հագուստի բաշխումը), որոնք նպատակ ունեին նպաստել ազգությամբ հայ փախստականների անցումը ինտեգրացմանը: Վերջերս միաձուլման քարոզարշավին զուգահեռ, UNHCR-ը Հայաստանում սկսեց մարդասիրական ծրագրերից անցնել զարգացման ծրագրերին: Ներկայումս UNHCR-ը ծրագրեր է իրականացնում մի շարք ոլորտներում, այդ թվում՝ բնակարանային շինարարության, վերականգնման աշխատանքների, առողջապահության և կրթության բնագավառներում:

Բնակարանային խնդիրը մնում է ամենահրատապը, քանի որ ավելի քան 10 հազար ընտանիքներ դեռևս մշտական օթևանի կարիք ունեն: UNHCR-ը այժմ իրականացնում է «Ապաստան» ծրագիրը, ըստ որի տնակներում, կիսանկուղային հարկերում, հանրակացարաններում, վթարային տներում բնակվող փախստականները ապահովվում են տներով: UNHCR-ը հովանավորել է փախստականների համար տների շինարարությունը Զվարթնոցում, Մարտունիում, Արթիկում, Մալիտակում, Ստեփանավանում և այլ շրջաններում:

Բացի դրանից, UNHCR-ը օգնում է փախստականների շրջանում ամենակարիքավորներին (հաշմանդամներ, ծերեր, կին կերակրողով ընտանիքներ) հիմնական բժշկական խնամքով, սննդով և եկամտաբերող ծրագրերով:

UNHCR-ը կարևոր դեր է խաղացել ՀՀ Փախստականների մասին օրենքի մշակման հարցում: Այս օրենքը կգործի որպես Փախստականների կարգավիճակի մասին 1951թ. Ժնևյան կոնվենցիայի իրականացման հիմնական միջոցը Հայաստանում: Օրենքը սահմանում է «փախստական» հասկացությունը, հաստատում է փախստականի կարգավիճակի սահմանման գործընթացը, ստեղծում է օրենսդրական դաշտ փախստականներին վերաբերող գործունեության համար, ձևակերպում է փախստականների իրավունքներն ու պարտականությունները և Հայաստանի կառավարության պարտավորությունները փախստականների նկատմամբ: Օրենքը հատուկ կարևորություն ունի ոչ ԱՊՀ երկրներից ապաստան որոնողների համար, թեև նրանց ընդհանուր թիվը սակավ է: Անցած երկու տարիների ընթացքում եղել են ներգաղթողներ Իրանից, Իրաքից, Պակիստանից, Սոմալիից և Սուդանից: UNHCR-ը կշարունակի համագործակցել Հայաստանի կառավարության հետ՝ ապահովելով Օրենքի իրականացումը գործընթացների զարգացմամբ և խնդրի հետ առնչություն ունեցող կառավարական համապատասխան գործակալությունների վերապատրաստմամբ:

UNHCR-ը շարունակում է սերտորեն համագործակցել Հայաստանի կառավարության հետ՝ կենտրոնական և տեղական իշխանությունների համար դասընթացների կազմակերպմանն օժանդակելով, տեխնիկական օգնությամբ և հետագա համագործակցությամբ՝ կառավարությանը հնարավորություն տալով իր վրա վերցնել փախստականների հարցերով զբաղվելու լրիվ պատասխանատվությունը և արդյունավետ լուծումներ գտնել:



Միածուրմը UNHCR-ի կողմից դիտվում է որպես տեղական ինտեգրացմանն ուղղված բնականոն քայլ: (Փախստական, որը դիմում է Հայաստանի Քաղաքացիություն ստանալու համար):

Վերջերս, UNHCR-ի հայաստանյան գրասենյակը և ՀՀ Սոցիալական ապահովության նախարարության Միգրացիայի և փախստականների վարչությունը ստորագրեցին փոխադարձ համաձայնության մի հուշագիր, ըստ որի UNHCR-կառավարություն համագործակցությունը դրվում է պաշտոնական շրջանակի մեջ՝ դյուրացնելով հետագա համագործակցությունը փախստականների խնդիրների լուծման հարցում:

Չնայած դրան, առաջիկա տարիներին UNHCR-ի Օգնության ծրագիրը Հայաստանում աստիճանաբար կավարտի այս փուլը, և գրասենյակը ուշադրությունը կսևեռի փախստականների իրավական պաշտպանության, 1951թ. Կոնվենցիայի և Փախստականների մասին օրենքի իրականացման վրա:

ՄԱԿ-ի ՄԱՆԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Նրա հիմնական նպատակներն են.

- հասնել Երեխաների համաշխարհային գազաթաժողովից բխող մանուկների առողջության, կրթության, անվտանգության ազգային նպատակների իրականացմանը,
- քարելավել կանանց ու երեխաների համար նախատեսված առողջապահական և կրթական ծառայությունները,
- ապահովել հիմնական սոցիալական ծառայությունների, առողջապահության, կրթության համընդհանուր մատչելիությունը,
- ապահովել երեխաներին ու պատանիներին առողջ կենսակերպի վերաբերյալ տեղեկատվությամբ,
- խթանել վաղ շրջանի մանկական գործունեության զարգացումը,
- կազմակերպել այլընտրանքային հաստատություններ հաշմանդամ և սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների համար,
- ապահովել ու խթանել Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի և ՀՀ Երեխայի իրավունքների մասին օրենքի կիրարկումը:



1993թ. ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի գործադիր խորհուրդը վավերացրեց համագործակցության առաջին երկամյա ծրագիրը: Այդ «արտակարգ» ծրագիրը զարգացման երկարաժամկետ օժանդակության հիմք դարձավ և անհրաժեշտ ֆինանսավորում ապահովեց: 1995թ. Գործադիր խորհուրդն ընդունեց հնգամյա

ծրագիր: Նախապատրաստական փուլում է գտնվում 2000-2004թթ. համագործակցության ծրագիրը:

Կրթություն

Հիմնական նպատակներն են.

- բարձրացնել կրթության որակը ուսումնական նոր ծրագրերի և ուսուցման բարենորոգված մեթոդների օգնությամբ,
- օժանդակել դպրոցի կառավարման ապակենտրոնացման, կրթական համակարգում ծնողների ու հասարակության ներգրավման, առողջ և մատչելի կրթության խթանման բարեփոխումներին,
- բարձրացնել ծնողների իրազեկությունը մանուկների զարգացման վաղ փուլի վերաբերյալ:

UNICEF 1999

Առողջապահություն

Առողջապահության ոլորտում ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամն իր ուշադրությունը կենտրոնացրել է համապատասխան սարքավորումների ապահովման և մատչելի ռազմավարության ընդունման, երկրի կանանց ու երեխաների համար առողջապահական հիմնական ծառայությունների մատչելիության երաշխիքներ ստեղծելու վրա: 1994թ. ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամն աջակցեց մանկական-ընկերական հիվանդանոցի ստեղծման նախաձեռնությանը: Հիվանդանոցի ողջ անձնակազմը վերապատրաստման դասընթաց է անցնում մանուկների հետ վարվեցողության ծրագրով: ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամն աշխատել է նաև ՀՀ Առողջապահության նախարարության հետ՝ մշակելով այնպիսի քաղաքականություն, որով որոշ կարևոր դեղամիջոցներ մատչելի կդառնան առողջապահական առաջնային ծառայությունների միջոցով: Երեխաների համար ամբուլատոր հաստատություններն այս մակարդակով անհրաժեշտ ծառայություններ մատուցելու համար ապահովված են համապատասխան սարքավորումներով ու դեղամիջոցներով: Մինչև օրս մանկաբույժների 40 տոկոսը և բուժքույրերի 10 տոկոսը շնչառական սուր վարակների և աղիքային հիվանդությունների դեպքում ճիշտ գործելու վերաբերյալ դասընթացներ են անցել:

1998թ. ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամը, ՀՀ Առողջապահության նախարարության հետ համատեղ, 100 հազար օրինակ տպագրանակով ուղեցույց-գրքույկ է հրատարակել մինչև մեկ տարեկան երեխա ունեցող մայրերի համար՝ շնչառական սուր վարակների և աղիքային հիվանդությունների վերաբերյալ: Ձգալի ջանքեր են գործադրվել պատվաստման ծառայություններին օժանդակելու և դիֆտերիայի ու պոլիոմիելիտի վերահսկողության ուղղությամբ: 1995-1998թթ. զանգվածային պատվաստումներ են իրականացվել այս հիվանդությունների դեմ իմունային մակարդակը բարձրացնելու և մահացությունը կանխելու նպատակով: Հատուկ միջոցառումներ են ձեռնարկվել նաև կարմրուկի մասին իրազեկությունը բարձրացնելու ուղղությամբ: Բժշկական միջոցներով ու սարքավորումներով ապահովվել են Հայաստանի բոլոր մայրերը, որը վկայում

է մանկաբարձական անհրաժեշտ օգնությունը բոլոր կանանց համար մատչելի դարձնելու և նորածինների խնամքի որակը բարելավելու մասին:

Մնունդ

Որոշ ժամանակամիջոցում ընդհանրապես բացակայում էր մոր և մանկան սնուցմանը վերաբերող ստույգ տեղեկատվությունը, և շատ ջանքեր են գործադրվել լրատվական այս բացը լրացնելու համար: 1998թ. ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամը հովանավորել է մոր և մանկան սնուցման վիճակի վերաբերյալ ծավալուն հետազոտության անցկացումը: Առողջապահության համաշխարհային կազմակերպության (WHO) հետ համատեղ ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամն օժանդակում է ՀՀ Առողջապահության նախարարությանը սննդի քաղաքականության մշակման գործում: 1995թ. ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամն սկսեց աջակցել հանրապետությանը՝ իր առջև դրված խնդիրը լուծելու համար, այն է՝ յոդացնել տեղական արտադրության աղբ և վերացնել յոդի պակասի հետևանքով առաջացած խանգարումները: Այժմ Հայաստանում արտադրվում է բացառապես յոդացված աղ: Այնուամենայնիվ 1998թ. հետազոտության արդյունքում պարզ դարձավ, որ տնային տնտեսությունների 30 տոկոսը սպառում է ներմուծված յոդացված աղ:

Կրթություն

ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամն աջակցում է ՀՀ Կրթության նախարարությանը՝ իրագործելու կենսական նշանակություն ունեցող ուսումնական մի ծրագիր, որը ներառում է այնպիսի առարկաներ, ինչպես բժշկագիտությունը, սնունդը, հսկայականությունների կարգավորումը, գիտելիքներ անցանկալի հոլիոթյունից, ՁԻԱՀ/ՄԻԱՎ-ից, ծխախոտի և թմրանյութերի չարաշահումից խուսափելու մասին: 52 դպրոցներում ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամը հովանավորել է հիմնական հիգիենայի դասընթացը: 1997թ. ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամը ՄԱԿ-ի Չարագցման ծրագրի, Համաշխարհային բանկի և ՀՀ Գիտության և կրթության նախարարության հետ համատեղ նախաձեռնել է վերափոխված պլանացման ծրագրի համապատասխան ուսուցման դասընթաց դպրոցների

1995թ. ի վեր Հայաստանում իրականացվող պոլիոմիելիտի վերացման համաշխարհային ծրագիրն արդեն տալիս է իր արդյունքները, որոնք հնարավոր դարձան ՀՀ առողջապահության նախարարության, Առողջապահության համաշխարհային կազմակերպության, ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի, Վարակների վերահսկման կենտրոնի, Rotary International կազմակերպության և այլոց շնորհիվ:

«Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ 21-ը ապրիլի, 1998թ.

Առողջապահություն և սնունդ

Հիմնական նպատակներն են.

- իրականացնել պատվաստումների լայնածավալ ծրագիր, պատվաստումների ապահով գործընթաց և Մառցաշրթայի դեկավարում,
- գնահատել պատվաստումների ազգային լայնածավալ ծրագիրը,
- ուժեղացնել հսկողությունը շնչառական սուր վարակների և փորլուծությունների ժամանակ,
- բարձրացնել մայրերի իրազեկությունը մանկանը կրծքով կերակրելու, պատվաստումների ու շնչառական սուր վարակների և փորլուծությունների դեպքում տնային պայմաններում ճիշտ խնամքի կարևորության վերաբերյալ,
- վերահսկողություն սահմանել չորացված աղի ներմուծման վրա,
- հետևողականություն ցուցաբերել 1998թ. կատարված վերարտադրողական առողջապահության և սննդի ուսումնասիրությունների արդյունքների խնդրում,
- աջակցել մանկական հիվանդությունների ինտեգրացված վարմանը (IMCI), երեխաների խնամքի բարելավված համակարգի ու երեխաների պաշտպանության զարգացման մեխանիզմների ներմուծմանը:

Հատուկ պաշտպանության կարիք ունեցող երեխաներ

Հիմնական նպատակներն են.

- սերտորեն համագործակցել ՀՀ Սոցիալական ապահովության և այլ նախարարությունների հետ հաստատությունների ալլընտրանքային ծրագրերի զարգացման նպատակով,
- նպատակ հասարակական կյանքում հաշմանդամ երեխաների ներգրավմանը և բարելավել այդ երեխաների կրթական հնարավորությունները,
- աջակցել «Կարիքավոր երեխաներ» ծրագրին:



Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան

Հիմնական նպատակներն են.

- աջակցել «Արեգ» մանկական լրատվական ռադիոհաղորդումների գործակալությանը և երեխաների այլ նախաձեռնություններին,
- ապահովել հայկական ռադիոհաղորդումների մասնակցությունը Երեխաների ռադիոհաղորդումների միջազգային օրը,
- աջակցել կառավարության և հասարակական կազմակերպությունների նախաձեռնություններին՝ ուսումնասիրելու և կիրառելու Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան,
- ապահովել Հայաստանի երեխաների մասնակցությունը ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի ինտերնետային «Պատանիների ձայնը» ֆորումին,
- որպես երեխայի իրավունքների պաշտպանների՝ հասարակական կազմակերպությունների և լրատվամիջոցների համար նորանոր հնարավորություններ ստեղծել,
- օժանդակել Երեխաների մասին կոնվենցիայի իրականացման համար պատասխանատու և հաշվետու կառավարման մարմիններին,
- նպաստել երեխայի իրավունքների ուսումնասիրության և պաշտպանության համար անկախ փորձագետների համակարգի, օրինակ միջնորդ պետական հաստատությունների ստեղծմանը՝ աշխատանքից դժգոհություն ունեցողների համար:

տնօրենների համար: Գեկավարման և առաջնորդելու կարողությունների վերաբերող ուսուցման նյութերն օգնում են դպրոցների տնօրեններին ապակենտրոնացման արդյունքում առաջացած նոր խնդիրներն իրականացնելիս:

Հատուկ պաշտպանության կարիք ունեցող երեխաներ

Ճգնաժամային տարիներին ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամն ուսումնասիրել է մանկական հաստատությունների վիճակը՝ երաշխավորելով, որ բնակչության այս առանձնապես կարիքավոր խավի ջեռուցման, հանդերձանքի, դպրոցական պիտույքների և սննդի հիմնական պահանջումները բավարարվում են: Ճգնաժամի թուլացմանը զուգահեռ, ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամն այժմ իր ուշադրությունը կենտրոնացրել է այլընտրանքային հաստատությունների զարգացման օժանդակության վրա, ներառյալ որդեգրման համակարգի խստացումը և խմամակալության համակարգի ներմուծումը: ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամն աջակցում է նաև ՀՀ Կրթության նախարարությանը՝ կրթական համակարգերում ներգրավելու թերություններ ունեցող երեխաներին: ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամը հովանավորել է Հայաստանի անչափահասների գաղութում գտնվող երեխաների վիճակը լուսաբանող հետազոտությունը և այլ հաստատություններում ապրող երեխաների կենսապայմանների բարելավման ու հոգեբանական աջակցության ապահովման ծրագրերը:

Երեխայի իրավունքների կոնվենցիայի առաջընթացը

1996թ. Հայաստանի կառավարությունն ընդունեց ՀՀ «Երեխայի իրավունքների մասին» և ՀՀ «Ընտանիքի մասին» օրենքները: ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի սերտ համագործակցությունը նախարարությունների հետ նպաստեց, որ այս օրենքների մեջ իր արտացոլումը գտնի Երեխայի իրավունքների կոնվենցիան: ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամը հովանավորել է ՄԱԿ-ի Հանձնաժողովի համար Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային վերաբերող Հայաստանի գեկույցի տպագրությունն ու տարածումը, ինչպես նաև գեկույցի շուրջը հասարակական

կազմակերպությունների երկխոսությունը: Ի լրումն այս ամենի, ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամը նպաստել է Կոնվենցիայի ճիշտ ըմբռնմանը՝ ստեղծելով ու տպագրելով բանաստեղծությունների գունագարդ մի գիրք, որով Կոնվենցիան մատչելի է դառնում նախադպրոցական և տարրական դասարանների երեխաների համար: ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամն օժանդակել է նաև Հայաստանի հասարակական կյանքին երեխաների մասնակցությունը՝ պատրաստելով երիտասարդ լրագրողներ, աջակցելով մանկական լրատվական ծառայության ստեղծմանը և ապահովելով նրանց մասնակցությունը ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի «Պատանիների ձայն» և Շվեդիայի «Ապագայի կրողները» ծրագրերին:

Երեխաների հարցերով ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի գործընկերները

ՀՀ Առողջապահության, կրթության և սոցիալական ապահովության նախարարությունները ՄԱԿ-ի

«Գեկտեմբերի 13-ին՝ երեխաների ռադիոհաղորդումների միջազգային օրը, Հայաստանի հեռուստառադիոկայանները, ինչպես ողջ աշխարհում, հեռարձակման համար եթերային ժամանակ տրամադրեցին նախապես պատրաստված երեխաներին: Այս իրադարձության հովանավորներն էին Ազգային ռադիոյի մանկապատանեկան հաղորդումների գլխավոր խմբագրությունը և ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակը»:
Նոյյան տասյան, Համառոտ լուրեր 17-ը դեկտեմբերի, 1998թ.

Մանկական հիմնադրամի հիմնական գործընկերներն են: Նրանք ստանձնել են ծրագրերի իրականացման առաջատարի դերը: ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի աշխատանքներին նպաստել է նաև ՄԱԿ-ի այլ գործակալությունների ու հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությունը: Տարիների ընթացքում ընդլայնվել է նաև ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի համագործակցությունը գանգվածային լրատվամիջոցների հետ: Նախորդ երկու տարիների ընթացքում ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամն աջակցություն է ունեցել Շվեդիայի և

Ֆինանսավորման աղբյուրներն ու կարիքները

Նիդեռլանդների կառավարությունների, USAID-ի, Վարակների վերահսկման ամերիկյան կենտրոնի, Հայաստանի Կոկա-Կոլա Բոթլըզ ձեռնարկության, ինչպես նաև Ֆրանսիայի, Իտալիայի, Ճապոնիայի և Բսպանիայի ազգային հանձնաժողովների կողմից:



ՄԱԿ-ի ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

UNFPA-ը Հայաստանում իր աշխատանքներն սկսել է 1995թ. նոյեմբերից, երբ Հայաստանի կառավարության և UNFPA-ի կողմից հավանության արժանացավ Վերարտադրողական առողջապահության ամրապնդման 725 հազ. ամերիկյան դոլար բյուջեով ծառայությունների ենթածրագիրը, որը մտահղացվել է մի շարք համազգային հոգսերի թելադրանքով, ինչպես օրինակ պտղաբերության վերահսկողության անապահով միջոցների գերակշռությունը, մայրական մահացության և անպտղաբերության բարձր տոկոսայնությունը, ընտանիքի պլանավորման, սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների և ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի վերաբերյալ գիտելիքների պակասը բնակչության շրջանում:

UNFPA-ը սերտորեն համագործակցում է ՄԱԿ-ի այլ գործակալությունների հետ, ինչպիսիք են ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը (UNDP), ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամը (UNICEF), Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (WHO), Փախստականների գծով գլխավոր հանձնակատարի գրասենյակը (UNHCR), ինչպես նաև երկկողմանի և բազմակողմանի գործակալություններն ու հասարակական կազմակերպությունները, այդ թվում USAID-ը, Ջոն Հոփքինս համալսարանը, Սիացյալ մեթոդիստների օգնության կոմիտեն (UMCOR) և այլք:

UNFPA-ի կողմից ֆինանսավորված ենթածրագիրը ձեռնարկեց համազգային մի քանի տագնապալից հիմնախնդիրների իրականացումը, որոնք ուրվագծված էին 1994թ. ընդունված Վերարտադրողական առողջապահության ազգային ծրագրում (RH)՝ հետևելով Բնակչության և զարգացման միջազգային կոնֆերանսի (ICPD) առաջարկներին (Կահիրե 1994թ.):

Ենթածրագրի հիմնական գործունեությունը, արդյունքներն ու ազդեցությունը

Գործունեությունը	Արդյունքները	Ազդեցությունը
<ul style="list-style-type: none"> «Գիտելիք, մոտեցումներ, փորձ» հետազոտության ղեկավարում 	RH իրավիճակի վերաբերյալ վերջին տեղեկությունները	<ul style="list-style-type: none"> Ավելի արդյունավետ քաղաքականության և ռազմավարության պլանավորում, Դոնորների կողմից առավել ուղղորդված օժանդակության ծրագրեր
<ul style="list-style-type: none"> 77 FP միավորների ստեղծումը Հակաբեղմնավորիչների ապահովումը, FP ապահովողների ուսուցումը 	RH/FP ծառայությունների ապահովումը և երկրում հակաբեղմնավորիչների առկայությունը և մատչելիությունը	<ul style="list-style-type: none"> Անցանկալի հղիությունների ընդհատումը նվազել է 1/3-ով Հակաբեղմնավորիչների կիրառումը ավելացել է 3.8 անգամ Մայրական մահացածության տոկոսը նվազել է 1/3-ով
<ul style="list-style-type: none"> RH MIS ստեղծումը 	Կայուն RH իրավիճակի ղեկավարում և համակարգի հաշվետվություն	<ul style="list-style-type: none"> Վերականգնողական առողջապահության ավելի արդյունավետ ղեկավարումը Բարելավված պլանավորում և ռազմավարության զարգացում վերականգնողական առողջապահության բնագավառում

1997-99թթ. ընթացքում ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամը և UNDP-ն օժանդակել են ՀՀ կառավարության՝ ազգային կարևոր նշանակություն ունեցող նախաձեռնությանը, այն է՝ 2001թ. մարդահամարին: Համատեղ ֆինանսավորված փորձնական մարդահամարի նախագիծը կառավարությանն օգնեց փոքրամասշտաբ մարդահամար անցկացնել, որի ընթացքում ստուգվել և համապատասխանեցվել են կիրառվող մեթոդները, նորացվել է պահանջվող քարտեզների մի մասը և վերապատրաստվել են հարցին առնչություն ունեցող պաշտոնյաները: Վերոհիշյալ նախագծի շրջանակներում ԱՄՆ-ի Մարդահամարի բյուրոն տեխնիկական օժանդակություն է ապահովել:



ՀԱՄԱՇԵԱՐՅԱՅԻՆ ՊԱՐԵՆԻ ԾՐԱԳՐԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

WFP-ն Հայաստանում իր գործունեությունն սկսեց 1993թ. վերջին՝ փախստականների, տեղահանվածների և կարիքավորների անհետաձգելի խնդիրներով զբաղվելու առաքելությամբ:

Գյուղատնտեսություն, հիմնական բերքը

- Հայաստանը միշտ էլ ներմուծող երկիր է եղել: Տեղական արտադրության հացահատիկը բավարարում է երկրի պահանջարկի ընդամենը կեսը:

- 1997-98թթ. ներմուծվել է մոտ 367.000 տոննա հացահատիկ, որից 156.000 տոննան՝ սննդի նպատակով: Սպասվում է, որ 1998-99 շուկայական տարում ներմուծումների ծավալը գրեթե նույնը կլինի, այդ թվում՝ վարկերի շնորհիվ և սննդի նպատակով ներմուծումները:

- Աննախադեպ անբարենպաստ էին 1998-99թթ. ձմռան կլիմայական պայմանները: Ձերմաստիճանը վերջին 30 տարիներին միջինից ամենաբարձրն էր, իսկ տեղումների քանակը՝ ամենացածրը, որն ըստ էության կործանարար էր աշնանացանի համար:

Համաշխարհային պարենի ծրագրի պատմությունը/ Ծրագրերի գնահատականներ

1994թ. ի վեր Համաշխարհային պարենի ծրագրի օժանդակությունը նպաստել է բարելավելու թոշակառուների, ծնողագուրկ երեխաների և բազմազավակ ընտանիքների սննդի վիճակը, որոնց ամսական եկամուտն ամերիկյան 5 դոլարից էլ պակաս գումար է կազմում: Մինչև օրս Համաշխարհային պարենի ծրագիրը 30.2 մլն. դոլար արժողությամբ 48.180մ/տ առաջին անհրաժեշտության սնունդ է բաժանել կարիքավորներին: Քննարկումների և համատեղ ծրագրերի մշակման համար WFP-ի նախագահությամբ օգնության բաշխման ամենամսյա ժողովներին մասնակցում են ՀՀ կառավարության մարդասիրական օգնության հանձնաժողովը և տարբեր բարեգործներ:

1999թ. տրամադրած օգնությունը

1999թ. WFP-ով նախատեսված օգնություն ստացող նպաստառուների թիվը 170 հազար է: WFP-ն շարունակում է «Փարոսի» միջոցով օժանդակ օգնություն տրամադրել՝ հատուկ ուշադրություն դարձնելով աղետի գոտուն: Փետրվար-մարտ և մայիս-հունիս ամիսներին համապատասխանաբար 113 հազար և 84.600 կարիքավորներ ստացել են WFP-ի հատկացրած օգնությունը: Սննդի զամբյուղը փետրվար-մարտ ամիսներին կազմել է 12 կգ ալյուր և 0,751լ բուսական յուղ, մայիս-հունիս ամիսներին՝ 12 կգ ալյուր և 1,51լ բուսական յուղ:

Ապրիլին WFP-ն 6-ամսյա փորձնական մի ծրագիր է նախատեսել վերարտադրողական տարիք ունեցող 8.500 կարիքավոր կանանց համար, որոնց մոտ առկա է մարմնի զանգվածի ցուցանիշը: Այս կանայք

Դոնորները

WFP-ի հիմնական դոնորներն են՝ Ճապոնիան, ԱՄՆ-ը, Նիդեռլանդները, Իտալիան, Շվեդիան, Շվեյցարիան, Գերմանիան և Մեծ Բրիտանիան:

Նվիրատվություններ հատկացրել են Գ-անիան, Ֆինլանդիան, Կանադան, Իռլանդիան և Էկվադորը:

հայտնաբերվել են 1998թ. հունիսին WFP-ի և ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի համատեղ ֆինանսավորման շնորհիվ հնարավոր դարձած և վերջինիս կողմից իրականացված ազգային սննդի ուսումնասիրության արդյունքում: Ծրագիրն ունի 2 փուլ. առաջինն ավարտվել է ապրիլին, երկրորդը սկսվել է հուլիսի 15-ին: Օրաբաժինը կազմում է 200 գ ալյուր, 25 գ բուսական յուղ և 40 գ պահածոյացված ձուկ:

Օգնության կազմակերպումը և աջակցությունը երկաթուղուն

Մարդասիրական օգնությունը Հայաստան է գալիս հիմնականում սևծովյան նավահանգիստների և ապա երկաթուղու միջոցով:

WFP-ն Հայաստանում լայնածավալ առաքումների 2 կետ ունի՝ Երևանը և Վանաձորը, որտեղ էլ պահեստավորվում է սնունդը:

1994-95թթ. WFP-ի կողմից ֆինանսավորվող Կովկասի խորհրդատվական կազմակերպչական միությունը 1.8 մլն. ԱՄՆ դոլար արժողությամբ օգնություն է տրամադրել Հայաստանի երկաթուղուն՝ ենթակառույցների բարելավման համար:

WFP-ի փոքր ինքնաթիռը որպես տարածաշրջանային փոխադրամիջոց է ծառայում մարդասիրական օգնությունն իրականացնողների համար: 1998թ. ինքնաթիռը 256 թռիչք է կատարել՝ տեղափոխելով 1.243 ուղևոր:



Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ (IBRD)
Զարգացման միջազգային գործակալություն (IDA)
Ֆինանսական միջազգային կորպորացիա (IFC)
Բազմակողմանի ներդրումների երաշխիքային գործակալություն (MIGA)
Ներդրումների վեճերի կարգավորման միջազգային կենտրոն (ICSID)

Ադրատությունը վերացնելու և կայուն տնտեսական աճ

ապահովելու նպատակով, Համաշխարհային բանկն ավելի քան 50 տարի վարկեր է տրամադրում և տեխնիկական օժանդակություն ցույց տալիս զարգացող երկրներին: 181 անդամ-երկրներից գրեթե յուրաքանչյուրը համաշխարհային բանկի խմբակցության անդամ է՝ կամ որպես նվիրատու, կամ որպես պարտատեր: Բանկը տեղակայված է Վաշինգտոնում (Կոլումբիայի երկրամաս) և ունի 100-ից ավելի գրասենյակների ցանց ավելի քան 75 երկրներում: Սկսած բանկի առաջին վարկից (250 միլիոն դոլար, որը 1947թ. տրվել է Ետպատերազմյան Ֆրանսիայի վերակառուցմանն օգնելու նպատակով), ողջ աշխարհի զարգացող երկրներին հատկացվել են միլիարդավոր դոլարներ այնպիսի բազմաբնույթ կարիքների համար, ինչպես կենսագազի արտադրությունը Հնդկաստանում, մասնագիտական վերապատրաստումները Կորեայի Հանրապետությունում և անտառատնկումը Կոստա-Ռիկայում:

Ինչպե՞ս է գործում այսօր


Համաշխարհային բանկը գործում է կառավարիչների վարչության ղեկավարությամբ, ընդ որում յուրաքանչյուր անդամ-երկիր ներկայացնում է մեկ կառավարիչ՝ սովորաբար նախարարը: Կառավարիչները բանկի քաղաքականության, գործառնությունների և վարկերի տրամադրման վերաբերյալ որոշումներն իջեցնում են

Վաշինգտոնում գտնվող 24 գործադիր տնօրեններին: Բանկի ամենամեծ բաժնետերերը՝ Ֆրանսիան, Գերմանիան, Ճապոնիան, Միացյալ Թագավորությունը և Միացյալ Նահանգները, նշանակում են մեկական գործադիր տնօրեն, իսկ մնացած 19-ը ընտրվում են ընտրական օկրուգի կամ մի խումբ երկրների կողմից:

Համաշխարհային բանկ

Հայաստանը Համաշխարհային բանկի խմբակցությանն անդամակցելու հայտ է ներկայացրել 1992թ. հունվարին և նրան միացել նույն թվականի սեպտեմբերին: Հայաստանում Համաշխարհային բանկի մշտական ներկայացուցչությունը բացվել է 1995թ. հուլիսին: Ներկայումս Հայաստանում Համաշխարհային բանկի մշտական ներկայացուցիչը պրն. Օուեյզ Սաադաթն է:

Հայաստանում



Ինչպես 1999թ. հունվարին Հայաստան այցելության ժամանակ հայտնեց բանկի նախագահ Ջեյմս Վուլֆենսոնը, Համաշխարհային բանկը առաջիկա երեք տարիների ընթացքում Հայաստանին կտրամադրի 240 միլիոն դոլարի վարկ: Ըստ Վուլֆենսոնի, 120 միլիոն դոլար կօգտագործվի Երևան-Թբիլիսի (Վրաստան) մայրուղու վերակառուցման համար: Նա ասաց, որ վարկերը կօգտագործվեն մալ ոռոգման ծրագրի, փոխադրումների ենթակառուցյի և Հայաստանի իրավական համակարգի ֆինանսավորման համար:

Հայաստան

«Ես եկա այստեղ իմ ընկերներին կրկին հանդիպելու և տեսնելու, թե ինչպես են ընթանում գործերը: Մենք այս երկրի հետ շատ լավ հարաբերություններ ունենք, և ակնկալում են դրանք էլ ավելի բարելավել»:

Ջեյմս Վուլֆենսոն
Համաշխարհային բանկի
նախագահ

ԱՌՈՂՋԱՊԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ



- ՄԱԿ-ի համակարգում WHO-ն միջկառավարական կազմակերպություն է:
- 191 անդամ-պետություն ունեցող WHO-ի նպատակը բոլոր ժողովուրդների առողջապահության հնարավոր ամենաբարձր մակարդակի ձեռքբերումն է:
- WHO-ի սահմանադրությունն ընդունվել է 1946թ. և սկսել է գործել 1948թ. ապրիլի 7-ից: Ամեն տարի այդ օրը նշվում է որպես Առողջապահության համաշխարհային օր:
- WHO-ի սահմանադրական 2 հիմնական

- գործառնություններն են.
- ա. միջազգային առողջապահական աշխատանքներում ստանձնել առաջատարի և համակարգողի դերը,
- բ. խթանել անդամ-պետությունների հետ նյութատեխնիկական համագործակցությունը:
- WHO-ն իր գործառնություններն իրականացնում է 3 մարմինների միջոցով՝ Առողջապահության համաշխարհային ասամբլեան, Գործադիր խորհուրդ և Բարտուղարություն:

Հայաստանը WHO-ի անդամ-պետություն է դարձել 1992թ. մայիսի 4-ին: WHO-ի Եվրոպայի տարածաշրջանային գրասենյակի (ԵՎԸՈ) և Հայաստանի միջև ստորագրված համագործակցության պայմանագրին 1994թ. օգոստոսին հաջորդեց WHO-ի միջանկյալ գրասենյակի բացումը Երևանում:

1990թ. ի վեր EUROHEALTH ծրագրի նոր անկախացած պետությունների և Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի երկրների հետ ԵՎԸՈ-ի համագործակցության հիմքն է հանդիսացել: Սահմանում է ԵՎԸՈ-ի կողմից իրականացվող տեխնիկական համագործակցության զարգացման բոլոր միջոցառումների շրջանակները տվյալ երկրի մակարդակով, համակարգում է միջպետական գործունեությունը և նպաստում եվրոպական ցանցերում պետությունների ներգրավմանը: Նպատակ ունի աջակցելու առողջապահության զարգացմանն ուղղված և եվրոպական ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԻ 21 ծրագրի ռազմավարությանը միանալու ազգային ջանքերին:

Համագործակցության առաջնային բնագավառները

1. Առողջապահության քաղաքականության զարգացում:
2. Առողջապահական բարեփոխումներ:
3. Կանանց և երեխաների առողջություն:
4. Փոխանցվող հիվանդություններ:
5. Չփոխանցվող հիվանդություններ և առողջապահության ավելի բարձր մակարդակի զարգացում:
6. Շրջակա միջավայր և առողջություն:



ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

Ի՞նչ է OCHA-ն

OCHA-ն Միավորված ազգերի կազմակերպության մարդասիրական հարցերի համակարգման (նախկին՝ ՄԱԿ-ի Մարդասիրական հարցերի բաժին) գրասենյակն է, որը հիմնվել է 1992 թ. ապրիլին՝ հետևելով Գլխավոր ասամբլեայի պահանջին՝ ուժեղացնել մարդասիրական օգնության համակարգումը արտակարգ իրավիճակներում և աղետների ժամանակ:

OCHA-ի առաքելությունը

OCHA-ն իրավազրկված է համախմբել և համակարգել միջազգային հանրության, մասնավորապես ՄԱԿ-ի համակարգի համատեղ ջանքերը՝ հետևողականորեն և ժամանակին հոգալու աղետների և արտակարգ իրավիճակների ժամանակ հոգեկան ու նյութական վնաս կրած մարդկանց կարիքները: Մասնավորապես խնդիր ունի կրճատելու կարիքավորների թիվը, առաջարկելու արժանատի պատճառների լուծումներ, ինչպես նաև դյուրացնելու օգնությունից վերականգնում և զարգացում սահուն անցումը:

Ինչով է զբաղվում OCHA-ն

- Նպաստում է ՄԱԿ-ի գործակալությունների մարդասիրական ծրագրերի համակարգմանը, ինչպես նաև աջակցում է օգնությունից զարգացման ծրագրերին սահուն անցմանը,
- դոնորների և միջազգային հանրության համար հանդես է գալիս որպես մարդասիրական հարցերի վերաբերյալ տեղեկատվություն տարածող,
- կապ է պահպանում կառավարության, դոնորների, միջազգային և հասարակական կազմակերպությունների հետ՝ ռեսուրսները համախմբելու նպատակով,
- նպաստում է մարդասիրական և զարգացման ոլորտներում գործող միջազգային և հասարակական կազմակերպությունների միջև համագործակցության եզրերի ստեղծմանը:

Հայաստանում

OCHA-ն, Հայաստանի կառավարության խնդրանքով, իր հայաստանյան գրասենյակը հիմնել է 1994թ. օգոստոսին՝ երկրում տիրող սոցիալական ճգնաժամի պայմաններում:

OCHA-ի Հայաստանի համակարգման գրասենյակը, որ դեկավարվում է ՄԱԿ-ի Մշտական համակարգողի և մարդասիրական համակարգողի կողմից, հեշտացնում է մարդասիրական օգնության համակարգումը՝ սերտորեն համագործակցելով կառավարության, ՄԱԿ-ի գործակալությունների, միջազգային և հասարակական կազմակերպությունների հետ, նրանց միջև կապող օղակ դառնալով, մեծապես դյուրացնում Հայաստանում մարդասիրական օգնության բաշխումը և ֆինանսական միջոցների հայթայթումը:

Բնական աղետներին հակազդման համակարգումը

OCHA-ն աղետների ժամանակ օգնում է Հայաստանի կառավարությանը՝ համակարգելով ներքին հակազդեցությունը բնական աղետին: 1997թ. OCHA-ն համակարգեց միջազգային հանրության

հակազդեցությունը ջրհեղեղների հետևանքով Հայաստանի հարավում առաջացած արտակարգ իրավիճակում: Այն շտապ արձագանքել է նաև 1997-98թթ. երկրի տարբեր շրջաններում տեղի ունեցած բնական աղետներին և պատրաստել մի շարք հաշվետվություններ վնասների վերաբերյալ:

Մարդասիրական արձագանքի համակարգումը արտակարգ բարդ իրավիճակներում

OCHA-ն ՄԱԿ-ի միջգործակալական միացյալ երեք դիմում է ներկայացրել 1994-1997թթ.

ընդգրկող ժամանակաշրջանի համար, որոնց շնորհիվ ձեռք է բերվել մոտ 56 մլն. ԱՄՆ դոլար՝ ՄԱԿ-ի գործակալությունների և նրանց գործընկերների կողմից իրականացվող

մարդասիրական և վերականգնողական ծրագրերի իրականացման համար: 1997թ. ձևակերպվել է փաստաթուղթ մարդասիրական կարիքների ու զարգացման ռազմավարությունների փոխառնչությունների մասին, ուր շեշտվում է, որ Հայաստանում արտակարգ իրավիճակներում տրվող մարդասիրական օգնության գործընթացն ավարտվել է, միաժամանակ մատնանշվում է այն հանգամանքը, որ բնակչության մի մասը միջազգային հանրության մարդասիրական օգնության կարիք ունի, քանի որ երկիրն անցումային փուլում է գտնվում:

Ամեն ամիս մարդասիրական իրավիճակի վերաբերյալ տեղեկատվություն է հավաքվում և հաշվետվություններ առաքվում կառավարությանն ու միջազգային կազմակերպություններին:

OCHA-ն աջակցում է ՄԱԿ-ի խմբին՝ Հայաստանում դեռևս առկա մարդասիրական կարիքների վերաբերյալ ՄԱԿ-ի փաստաթղթերի պատրաստման հարցում:



ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Միգրացիայի միջազգային կազմակերպությունը (IOM) միջկառավարական կազմակերպություն է՝ հավատարիմ այն սկզբունքին, որ մարդկային և կանոնավոր միգրացիայից գաղթողները և հասարակությունը շահում են: Թեև IOM-ը ՄԱԿ-ի գործակալություն չէ, այն սերտորեն համագործակցում է ՄԱԿ-ի կազմակերպությունների հետ աշխարհի ավելի քան 70 երկրներում, ուր իր գրասենյակներն ունի: 69 երկրներ IOM-ի անդամ-երկրներ են, իսկ 49-ը՝ դիտորդներ: Ողջ աշխարհում IOM-ի գործունեությունն ու ծրագրերն իրականացվում են 4 հիմնական ուղղություններով.

- մարդասիրական միգրացիայի գործունեություն (միգրանտների կազմակերպված տեղափոխում, վերադարձ և ինտեգրացիոն գործունեություն),
- միգրացիա հանուն զարգացման (որակյալ մարդկային ռեսուրսների վերադարձը կազմակերպող ծրագրեր),
- տեխնիկական համագործակցություն,
- միգրացիայի բննարկում, հետազոտում և տեղեկատվություն:

<p>1996թ. UNHCR-ը, IOM-ը և ԵԱՀԿ-ն (OSCE) նախձեռնել և գումարել են ԱՊՀ կոնֆերանս, որպեսզի ձեռնամուխ լինեն փախստականների, տեղահանվածների, այլ ձևերով պարտադրված</p>	<p>տեղահանման ենթարկված և ԱՊՀ ու հարևան երկրներ վերադարձած մարդկանց խնդիրների լուծմանը: Սա տևական գործընթաց է, որը կավարտվի 2000 թվականին:</p>
------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

Հանրապետությունում կազմակերպության կողմից իրականացված 3 ծրագրերն են.

• CBMMP (Միգրացիայի բնագավառում կադրային բազայի ամրապնդման ծրագիր)
 1996թ. ի վեր Հայաստանի կառավարությունը և IOM-ը համագործակցում են CBMMP ծրագրի շրջանակներում Հայաստանում միգրացիոն գործընթացի կառավարման միասնական համակարգ և գործունեության հնարավորություն ստեղծելու համար: Միգրացիոն պետական մարմնի բացակայության պայմաններում CBMMP-ն ստանձնել է միգրացիայի կառավարման համակարգի զարգացումը՝ հեշտացնելով որոշումների կայացման գործընթացը, հավաքելով և պատրաստելով օժանդակ փաստաթղթեր կառավարությունում վերանայելու համար, նախագծելով օրենքներ և վերապատրաստելով աշխատակազմը միգրացիային առնչվող խնդիրների համար: CBMMP-ն նախապայմաններ է ստեղծել Հայաստանի Հանրապետությունում միգրացիոն գործընթացի և հոսքի կառավարման միասնական համակարգ և համապատասխան կադրային բազայի զարգացման հնարավորություն ստեղծելու համար:

• MSDP (Միգրացիոն բաժնի հասարակական կազմակերպությունների զարգացման ծրագիր)
 IOM-ի այս ծրագիրը աշխատանքներ է տանում՝ կատարելագործելու միգրացիոն բաժնի հասարակական կազմակերպությունների կառուցվածքային բազան զարգացման հնարավորության ընձեռնելու միջոցով, որը միաժամանակ կզարգացնի կառուցվածքային և ադմինիստրատիվ հնարավորությունները:

• MED (Փոքր ձեռնարկությունների զարգացման ծրագիր)
 MED-ը աշխատանքներ է տանում բարձրացնելու ցածր եկամուտ ունեցող խավի և կանանց, ինչպես նաև հայրենադարձների, փախստականների և տեղահանվածների տնտեսական ինքնապահովվածությունը և վերջիններիս ինտեգրացումը՝ փոքր ձեռնարկությունների վերաբերյալ դասընթացներ կազմակերպելով, վարկերի և զբաղվածության հնարավորությունների ընձեռնմամբ: Իր գործունեության սկզբից MED ծրագիրը 533.930 ԱՄՆ դոլարի հասնող 270 փոխառություններ է տրամադրել: Դրանք տրամադրվել են 500 նպաստառուների, փոխառություն ստացողների և օժանդակություն ստացող բիզնեսում ներգրավված մարդկանց Երևանում, Գյումրիում և հարակից շրջաններում: MED ծրագիրը IOM-ի և UNDP-ի նախաձեռնությունն է:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Ի՞նչ է DPI-ը

Որպես ՄԱԿ-ի քարտուղարության բաղկացուցիչ մաս՝ DPI-ը երկրում ՄԱԿ-ի համակարգի վերաբերյալ տեղեկատվություն տարածող հիմնական աղբյուրն է: DPI-ը ՄԱԿ-ի քաղաքական, տնտեսական, սոցիալական և մարդասիրական բնագավառների գործունեության ու նպատակների մասին տեղեկատվական թարմ նյութեր է տրամադրում տեղական բազմատարր լսարանին: Ներկայումս DPI-ի երևանյան գրասենյակի աշխատանքը ղեկավարում է DPI-ի ներկայացուցիչը:

Հայաստանում

Միավորված ազգերի կազմակերպության DPI-ը ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի հիմնադիր մարմիններից է, որը ստեղծվել է 1992թ. Հայաստանի ՄԱԿ-ին անդամակցելուց անմիջապես հետո:

Հիմնական գործառույթները

- ՄԱԿ-ի աշխատանքի և նպատակների մասին լիարժեք տեղեկատվության ապահովում,
- ՄԱԿ-ի առաջնային հարցերին ու հատուկ իրադարձություններին առնչվող տեղեկատվական գործունեության նախագծում, պլանավորում և համակարգում՝ խորհրդակցելով շահագրգիռ բաժինների ու գրասենյակների հետ,
- ՄԱԿ-ի հասարակական-տեղեկատվական գործունեության համար այլ կազմակերպությունների հետ համագործակցության և նրանց օժանդակության ուղիների որոնում,
- զանգվածային լրատվամիջոցների, կառավարության լրատվական ծառայությունների, հասարակական կազմակերպությունների և ուսումնական հաստատությունների հետ արդյունավետ հարաբերությունների հաստատում,
- ՄԱԿ-ի կենտրոնական գրասենյակի նյութերի տեղական լեզվով թարգմանություն, հրատարակում և տարածում,
- ՄԱԿ-ի տոմսական միջոցառումների կազմակերպում:

Մեր տպագրությունները

DPI-ի Երևանյան գրասենյակը ձեռնարկել է մի շարք տեղեկատվական նյութերի նախապատրաստում և տարածում.
 • ՄԱԿ-ի նորությունները՝ «Շարքավա համառոտ լուրերը», հրատարակվում է հայերեն և անգլերեն լեզուներով ու բաժանվում ՄԱԿ-ի գրասենյակի անձնակազմին, Հայաստանի իշխանությունների մամուլ ծառայություններին, զանգվածային լրատվամիջոցներին և շահագրգիռ հասարակական կազմակերպություններին:

- ՄԱԿ-ի տեղեկագիրը քողարկվում է եռամսյա հաճախականությամբ՝ ՄԱԿ-ի բոլոր գործակալությունների համատեղ ջանքերի շնորհիվ:
- «Կոստվոյի արդի իրադրությունը» Կոստվոյի իրադրության վերաբերյալ ՄԱԿ-ի շարքավա լուրերն են:
- Լրաքաղ կատարվում է ըստ իրադարձությունների կարևորության ու անհրաժեշտության:

DPI-ը տպագայում նույնպես կշարունակի տպագրել նմանատիպ նյութեր:

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԱԿ-ի բնագիր նյութերը լայն հասարակայնությանն ավելի մատչելի դարձնելու համար DPI-ը նախաձեռնել է ՄԱԿ-ի հրատարակությունների հայերեն թարգմանությունները, այդ թվում՝

- ՄԱԿ-ի կանոնադրությունը (գրքույկ)
- Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը
- 1948-1998թթ. Մարդու իրավունքների՝ հռչակագիրը
- Ամեն ինչ ՄԱԿ-ի մասին
- Համառոտ ՄԱԿ-ի մասին:

ՄԱԿ-ի տեղեկատու գրադարան

ՄԱԿ-ի տեղեկատու գրադարանը տեղեկատվության կարևոր աղբյուր է Միավորված ազգերի կազմակերպության աշխատանքի վերաբերյալ և համալրվում է Գլխավոր ասամբլեայի, Անվտանգության խորհրդի և ՄԱԿ-ի այլ մարմինների կողմից ընդունված որոշումների լիակատար տեքստերով: Հավաքածուն պարբերաբար համալրվում է նաև Միավորված ազգերի կազմակերպության ընթացիկ զեկույցներով և այլ փաստաթղթերով, ինչպես օրինակ, ՄԱԿ-ի պարբերականներով, զեկույցներով, տեղեկատուներով, DPI-ի ու Միավորված ազգերի կազմակերպության մասնագիտացված գործակալությունների ծրագրերով և այլ կազմակերպությունների հրատարակություններով:

Ներկայումս գրադարանի գրացուցակում թվարկվում է 1726 ամուս գրականություն: Տեսա- ձայնակների համաձայն հավաքածուն գրադարանի հիմնական նյութերի անբաժանելի մասն է:

... 1999թ. I կիսամյակում
 Այցելումների թիվը՝ 1069, Դուրս տրված գրականություն՝ 4317:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 50-րդ տարեդարձը

UDHR-ի (Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի) 50-րդ տարեդարձը նշելու համար DPI-ը նախաձեռնել է կազմակերպել է «19-րդ հոդվածն աշխարհում» ընդհանուր խորագրով միջոցառումների շարք:

Ելույթ ունեցողները Հայաստանում հավատարմագրված ղեսպաններ և ղեսպանատների այլ աշխատակիցներ էին, տեղական զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներ մայրաքաղաքից և շրջաններից: Յուրաքանչյուր զեկուցող քննարկում էր խոսքի և մամուլի ազատության խնդիրներն իր երկրում և շրջանում, այսինքն՝ հռչակագրի 19-րդ հոդվածի հիմնական բովանդակությունը: Չեկուցումներն ամփոփվեցին մի ժողովածուի մեջ, որը հրատարակվեց Մամուլի ազատության համաշխարհային օրը (1999 թ. մայիսի 3-ին):

DPI-ը շուտով ինտերնետում կրացի իր էջը, և վերոհիշյալ բոլոր նյութերը կգետեղվեն այնտեղ:

Մեր հասցեն. ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակ, Կարլ Լիբկնեխտի փող. 14, Երևան, 375010

UNDP:
 Դեռ. 52-93-41/58-31-94/151-453
 registry@undp.am

UNICEF:
 Դեռ. 58-01-74/58-05-16/151-698
 unicef@arminco.com

UNFPA:
 Դեռ. 56-03-40/56-60-73
 karend@unfpa.am

UNDPI:
 Դեռ. 56-02-12/151-647
 dpiarm@arminco.com

UNHCR:
 Դեռ. 56-47-71/58-48-92/151-451
 unhcr@arminco.com

WHO:
 Դեռ. 56-43-67/56-53-24
 who@lx2.yerphy.am

OCHA:
 Դեռ. 56-23-55/151-749
 ocha@arminco.com

WFP:
 Դեռ. 58-05-38/56-49-04/151-572
 wfp@arminco.com

IOM:
 Դեռ. 58-56-92/151-793
 iom@arminco.com

Համարում օգտագործված նյութերը հիմնված են ՄԱԿ-ի համակարգում գործող կազմակերպություններից եւ DPI-ից ստացված տեղեկատվության վրա:

Մեկնաբանությունների եւ/կամ լրացուցիչ տեղեկությունների համար դիմել ՄԱԿ-ի Երևանյան գրասենյակ:

DEPARTMENT OF PUBLIC INFORMATION



UNITED NATIONS OFFICE IN ARMENIA

UN NEWS

BASIC FACTS ABOUT

ARTICLE 19 IN THE WORLD

PHOTOGRAPHY

REFERENCE LIBRARY

Hu Bi